ԲԱԺԻՆ 1: ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 1: ТЕОРИЯ ПЕДАГОГИКИ
SECTION 1: THEORY OF PEDAGOGY

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հովհաննիսյան Անահիտ
Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան, Հայաստան

Համառոտ ներածական. Հոդվածի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այսօր կարևոր է ձևավորել մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք ներառում են սոցիալ-հոգեբանամանկավարժական հետազոտության, մեթոդաբանության և մեթոդների մասին համակարգային գիտելիքներ, սոցիալ-հոգեբանամանկավարժական հետազոտությունը կազմակերպելու, պլանավորելու և անցկացնելու կարողություն, տեսական գիտելիքների ներդրման հնարների և ձևերի տիրապետում գործնականում՝ պրակտիկայի ընթացքում դրանք վերլուծելու և համադրելու համար:

Բանալի բառեր: *Կարողություն, մեթոդաբանություն, գիտական ճանաչողություն, մանկավարժական հետազոտություն, որոնողական-հետազոտական գործառույթ:*

Հիմնախնդիրը: Մանկավարժական որոնողական-հետազոտական գործունեությունը բարձրագույն ուսումնական հաստատությունում դիտարկվել է որպես մասնագիտական ներուժի և վերջնարդյունքների ձևավորման կարևոր գործոն:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Հետազոտության համար հիմք են հանդիսացել Վ. Ի. Զազվյագինսկու, Ռ. Ի. Ատախանովի, Վ. Ա. Բորդովսկու, Մ. Ն. Բորիտկոյի, Ա. Վ. Մոլոժավենկոյի և Ի. Ա. Սոլովցովայի հետազոտությունները, որոնց հրատարակման տարեթվերը նույնպես հաստատում են հիմնախնդրի արդիականությունը:

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել մանկավարժական որոնողական-հետազոտական գործունեությունը բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Հետազոտության նորույթը: Հոդվածը կնպաստի բարձրագույն ուսումնական հաստատության ուսուցման գործընթացում արդյունավետ կազմակերպելու հետազոտական-որոնողական գործունեություն՝ միտված մասնագիտական ներուժի և վերջնարդյունքների ձևավորմանը:

Հիմնական նյութի շարադրանքը: Ժամանակակից քաղաքակրթությունը մասնագիտական ներուժի պատրաստման գործում կրթության գործունեության բոլոր ուղղություններում առաջադրում է բարձր պահանջներ: Ընդգծվում է նորարական մշակումների և գիտահետազոտական մոտեցումների ակտիվ օգտագործման անհրաժեշտությունը: Վերջին տարիներին պարզ է դարձել, որ ուսումնական հաստատություններում որոշակի նախագծերի բարեփոխումները, լավագույն տարբերակների որոնումները յուրաքանչյուր ուսումնական հաստատության գործն են, և կրթության գործառույթները՝ որպես սոցիալական կայունության, մշակույթի շարունակականության, երիտասարդների բարոյական, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման, ազատ, ակտիվ և պատասխանատու, ստեղծագործող անձի դաստիարակության կարևոր գործոն, զգալիորեն ընդլայնվում են: Այդ նպատակին հասնելու համար ուսումնական հաստատություններում ավելացել է նրա նոր՝ **որոնողական-հետազոտական** գործառույթը [3, էջ 7]: Մանկավարժական հետազոտությունները բազմակողմանի են և բազմագործառութային: Դրանք պատմամանկավարժական, փիլիսոփայամանկավարժական, սոցիալ-մանկավարժական, հոգեբանամանկավարժական, սոցիալ-հոգեբանամանկավարժական, բժշկամանկավարժական բնույթ են կրում: Եթե նախադպրոցական հաստատությունը, դպրոցը, բուհը կամ այլ ուսումնական հաստատությունը չգտնի իր դեմքը, իր տեղը սոցիալական աշխարհում, ապա չի կարող դիմանալ մրցակցությանը, չի կատարի իր գլխավոր առաքելությունը՝ լինել գրավիչ սովորողի համար: Վերոբերյալը հաստատում է այն, որ սոցիալ-հոգեբանամանկավարժական հետազոտման սկզբունքների, մեթոդների տիրապետման անհրաժեշտությունը ոչ միայն այդ ոլորտի գիտնականների, այլև հոգեբանների, մանկավարժների, սոցիալական մանկավարժների գործն է: Դա հնարավորություն կտա ավելի լավ գիտակցելու կրթության և դաստիարակության նոր նպատակները և խնդիրները, յուրացնելու առաջավոր տեխնոլոգիաները, կազմակերպչական ճկուն ձևերը, գտնելու

մանկավարժական, հոգեբանական, սոցիալ-վերականգնողական բնական ձևերն ու մեթոդները, նույնիսկ վերանայելու կրթության և դաստիարակության որոշ սկզբունքներ: Ուսումնական հաստատություններում որոնողական-հետազոտական գործառույթները պետք է իրականացնեն մանկավարժները՝ գտնելով բարեփոխումների իրական հնարավորությունները:

Ներկա ժամանակաշրջանում, երբ անձի զարգացման խնդիրները դարձել են առաջնային, կրթության բնագավառում հետազոտությունները պետք է լինեն հոգեբանական և մանկավարժական, բացահայտեն և ուսումնասիրեն կրթության արտաքին և ներքին գործոնների միասնությունը, դրդապատճառների ձևավորման միջոցները և մանկավարժական պայմանները դիրքորոշումների, արժեքային կողմնորոշիչների, ստեղծագործական մտածողության, անձի ներընկալման, նրա համոզմունքների ձևավորման, մտավոր և ֆիզիկական զարգացման գործում: Գիտությունը կարող է զարգանալ միայն այն դեպքում, երբ անընդհատ լրացվում և հարստացվում է նորանոր փաստերով: **Գիտական հետազոտությունը** որոշակի օբյեկտի, առարկայի, երևույթի ուսումնասիրություն է, որի նպատակն է որոշել դրանց առաջացման, զարգացման օրինաչափությունները՝ նաև պրակտիկ գործունեության շահերից ելնելով վերափոխելով այն: **Գիտամանկավարժական հետազոտությունը** մանկավարժական նոր գիտելիքների ձևավորման գործընթաց է, ճանաչողական գործունեության տեսակ՝ ուղղված ուսուցման, կրթության և դաստիարակության օբյեկտիվ օրինաչափությունների բացահայտմանը: Դրանց հայտնաբերման և կիրառման համար անհրաժեշտ են գիտականորեն հիմնավորված հետազոտության մեթոդներ: Ահա այս մեթոդների ուսումնասիրությունը և տվյալ առարկային մոտենալու սկզբունքներն էլ կազմում են գիտության մեթոդաբանությունը [4, էջ 60]:

Շատ հաճախ ոչ միայն պրակտիկ մանկավարժները, այլև հետազոտողները «մեթոդաբանություն» հասկացության տակ տեսնում են կյանքից ու պրակտիկայից կտրված ինչ-որ բան: Արդի ուսումնասիրություններում «մեթոդաբանություն» հասկացության ներքո ամենից առաջ ընկալում են **գիտական ճանաչողության մեթոդաբանությունը,** այսինքն՝ գիտաճանաչողական գործունեության կազմակերպման ձևերի ու եղանակների մասին ուսմունքը:

Մեթոդաբանությունը գիտությանը տալիս է գիտական հետազոտության օբյեկտի, առարկայի վերլուծության, հետազոտության խնդիրների բնութագրությունը, այնուհետև ձևավորում է հետազոտական խնդիրների լուծման գործընթացում գիտնականի հետևողական գործունեության մասին պատկերացումները:

Մանկավարժական հետազոտության մեթոդներն ուսուցման, դաստիարակության և զարգացման օբյեկտիվ ճանաչողության ուղիներն են ու հնարները: **Մանկավարժական հետազոտության մեթոդիկան** որոշակի գիտական նպատակի արդյունքին հասնելու հնարների համակարգված միասնություն է, մանկավարժական հետազոտության կազմակերպման և կարգավորման եղանակ, գիտական նպատակին հասնելու դեպքում ստացված արդյունքների կիրառման կարգ: **Գիտամանկավարժական հետազոտության մեթոդաբանական սկզբունքներն են՝** 1. մանկավարժական երևույթների որոշակի գործոնների, դրդապատճառների, պայմանների օբյեկտիվությունը և պայմանավորվածությունը, 2. ամբողջական մոտեցումը մանկավարժական երևույթներին և գործընթացներին, 3. երևույթի ուսումնասիրությունն այլ երևույթների փոխգործունեության և կապերի հետ, 4. երևույթի ուսումնասիրությունը զարգացման մեջ [5, էջ 70]:

Մանկավարժական հետազոտության մեթոդի մեթոդաբանական հիմնավորումներ են անձնային, գործնական և համակարգված մոտեցումները**: Համակարգված մոտեցումն** ուղղված է ուսումնասիրվող մանկավարժական երևույթների տարրերի, նրանց միջև գոյություն ունեցող կապերի բացահայտմանը, ենթադրում է ուսումնասիրել օբյեկտը որպես համակարգ, դասակարգել այն, բացահայտել նրա կառուցվածքը, կառավարել այն՝ որպես ամբողջական կառույց:

Մանկավարժական հետազոտությունը միշտ պահպանում է իր յուրօրինակությունը: Խոսքը մանկավարժական գործընթացի, ուսուցման և դաստիարակության, ուսումնական հաստատության աշխատանքների կազմակերպման մասին է, որտեղ պարտադիր մասնակցում են մանկավարժը և սովորողը, գործում և զարգանում են մանկավարժական հարաբերությունները, լուծվում են մանկավարժական խնդիրներ: Հայտնի հոգեբանական մեթոդները և մեթոդիկաները օգտագործվում են դիրքորոշումը որոշելու, ախտորոշման, արդյունքների մեկնաբանման նպատակով: Երբ խոսքն անձի անհատականացված կողմնորոշիչների, կոլեկտիվի հոգեբանական դիրքորոշումների և մոտեցումների կամ մեթոդների մասին է, օրինակ՝ անձի ստեղծագործական ներուժի որոշման և այն իրագործելու աստիճանի մասին, ապա անհրաժեշտ է **հոգեբանամանկավարժական հետազոտություն**: **Սոցիալ-մանկավարժական և սոցիալ-հոգեբանամանկավարժական հետազոտությունն** ուսումնասիրում է կենսական կամ սոցիալական դժվար իրավիճակում հայտնված երեխայի կենսագործունեությունը, ընտանիքի, դեռահասի, երիտասարդական խմբում սոցիալական հարաբերություններից առաջացած և անմիջականորեն նրան առնչվող սոցիալա-

կան կոնկրետ գործընթացների և երևույթների օրինաչափությունները, որոնք սոցիալ-մանկավարժական աջակցության կարիք ունեն [3, էջ 39]:

Որոնողական-հետազոտական գործունեությունն ունի կարևորագույն նշանակություն մանկավարժ-հետազոտողի պատրաստման գործում: Այն նպաստում է ապագա մանկավավարժի ինչպես ընդհանուր, այնպես էլ մանկավարժական աշխարհայացքի ձևավորմանը, ապահովում է մանկավարժական հետազոտություն կատարելու համար անհրաժեշտ տեսագործնական պատրաստվածության մակարդակը:

Յուրաքանչյուր դասընթաց պետք է միտված լինի զարգացնելու ուսանողների մեթոդաբանական մշակույթը, կատարելագործելու նրանց գիտական կատեգորիալ ապարատը: Դասընթացների ծրագրերը պետք է ենթադրեն, որ երիտասարդ մասնագետը կատարի ուսումնասիրություն, հետազոտում, ստացված արդյունքների վերլուծություն և ընդհանրացում, մշակի և իրագործի առաջարկություններ, ինչը կնպաստի մասնագիտական վերջնարդյունքի ձևավորմանը: Որոնողական հետազոտական գործունեությունը պետք է ներառի հետևյալ մակարդակների ուսումնասիրությունները, որոնք ներկայացնում են բարդ ստորադասված համակարգ.

1. **փիլիսոփայական մակարդակ**. բարձրագույն մակարդակ է և հանդես է գալիս որպես բոլոր մեթոդաբանական գիտելիքների բովանդակային հիմք՝ որոշելով ճանաչողական գործընթացի և իրականության վերափոխման աշխարհայացքային մոտեցումները:

2. **Ընդհանուր գիտական մակարդակ.** այն ներառում է գիտական դասընթացներում օգտագործվող մեթոդական մոտեցումները, այդ թվում՝ սոցիալ-հոգեբանամանկավարժական:

3. **Կոնկրետ գիտական մակարդակ.** ենթադրում է հատուկ գիտական դասընթացի այս կամ այն մեթոդաբանական մոտեցումը:

4. **Տեխնոլոգիական մոտեցում.** արտացոլում է մեթոդների ամբողջություն, հետազոտման տեխնիկա, որոնք ապահովում են հուսալի էմպիրիկ նյութի ստացումը և դրա առաջնային մշակումը, որից հետո այն կարող է ընդգրկվել գիտական գիտելիքների շարքը [4, էջ 60]:

Հետազոտական մոտեցումները և կարողությունները պետք է դառնան ուսանողի մասնագիտական պատրաստվածության անբաժանելի մասը:

1. **Փիլիսոփայական մակարդակն** օգնում է ուսանողին հասկանալ համընդհանուր և մասնավոր մեթոդաբանությունները, դիալեկտիկայի երեք հիմնական օրենքների մեկնաբանումը մանկավարժության մեջ, բացահայտել

իր անձնական ճանաչողական ընդունակությունները՝ զգայականը և ռացիոնալը, ստեղծագործությունը և գիտելիքը, ճշմարտության և սխալ պատկերացումների խնդիրը, ներըմբռնման դերը ճանաչողության մեջ և այլն:

Ներկայացնենք գործնական պարապմունքներին քննարկվող մի քանի տարբերակներ:

➢ **Դիալեկտիկայի** հակադրությունների միասնության և պայքարի, քանակականից անցումը որակականի, բացասման բացասումի օրենքների համաձայն՝ բացատրե՛ք սովորողի խրախուսման և պատժի հիմնախնդիրը:

➢ **Ներկայացրե՛ք Ձեր օրինակը՝ ըստ Ձեր ավարտական աշխատանքի թեմայի ենթարկելով վերլուծության՝ համաձայն ներքոբերյալ բացատրության.**

• մանկավարժական կոնկրետ օրինակի վրա դիտարկե՛ք երեխայի այս կամ այն արարքը՝ որպես երևույթ, որը բացահայտում է նրա անձնավորության էությունը: Արդյո՞ք արժի անհանգստանալ, եթե միշտ ճշտախոս երեխան հանկարծ խաբում է իր դաստիարակին կամ ծնողներից մեկին:

➢ **Մանկավարժական պրակտիկայից վերցված օրինակի վրա բացահայտե՛ք հնարավորությունների և իրականության դիալեկտիկան:**

• Իրականությունն այն է, ինչն արդեն կա. առկա է երեխայի բնավորությունը, իսկ հնարավորությունն այն է, ինչը կարող է լինել կամ չլինել: Ի՞նչ տեղի կունենա, եթե իրականանա որոշակի հնարավորությունը:

➢ **Բացահայտե՛ք պատճառի և հետևանքի դիալեկտիկան մանկավարժական օրինակի վրա, երբ յուրաքանչյուր նոր հետևանք միևնույն ժամանակ այլ հետևանքի պատճառն է:**

➢ Դիտարկե՛ք մանկավարժության մեջ ճանաչողության **երկու մակարդակները՝ զգայական և տեսական**: Ցո՛ւյց տվեք ճանաչողության գործընթացում զգայականի և ռացիոնալի միասնականությունը: Դիտարկե՛ք ստեղծագործականը և ինտուիցիան՝ ներըմբռնումը մանկավարժական տեսանկյունից:

2. **Ընդհանուր գիտական մակարդակում** առաջարկվող մոտեցումներին և մեթոդներին կարելի է տիրապետել՝ ներառվելով իմիտացիոն (ուսումնական վարժությունների համակարգի, խաղերի, թրեյնինգների) և իրական հետազոտական որոնումների միջոցով: Այդ իսկ պատճառով առաջարկվում են բոլոր թեմաներին համարժեք ուսումնական և գործնական առաջադրանքներ: Ապագա մասնագետի գործառութային-դերային դիրքորոշման (ախտորոշիչ, հաղորդակցական, կանխորոշող) իրագործման միջոցով ուսումնասիրվում են սոցիալ-մանկավարժական գործունեության հիմքերը: Նշե՛ք գործնական պարապմունքին քննարկվող տարբերակներ:

Ներկայացրե՛ք Ձեր օրինակը՝ ըստ Ձեր ավարտական աշխատանքի թեմայի ենթարկելով վերլուծության՝ համաձայն ներքոբերյալ բացատրության:

➢ **Կամքի դաստիարակության պայմանները.**

- Ե՞րբ է արտահայտվում **կամքը:**
- «Ցանկանալ» նշանակում է «կարող եմ»:
- Անլուծելի որոշումներ չընդունել:
- Մշակել սովորություն՝ գնահատել սեփական գործողությունները:
- Մշտապես կատարել **վարժանք**՝ վարժեցնել «կամային ճիգերը»:

3. Ուսումնասիրվում են այն թեմաները, որոնք որոշում են սոցիալ-մանկավարժական պրակտիկայում պրոբլեմային իրավիճակների լուծման գործընթացի ալգորիթմիզացիան և տեխնոլոգիզացիան, որոնք որոշում են յուրացման հնարավորությունը:

➢ Սոցիոլոգիական հարցումը՝ որպես փորձագիտական հետազոտության մեթոդ. ուսումնասիրել Ձեր գյուղի, ՆՈՒՀ-ի, դպրոցի, «ռիսկի խմբի» երեխաներին, ներկայացնել դիագրամի տեսքով [1, էջ 144-145]:

4. Էմպիրիկ և տեսական հետազոտությունների հիման վրա ուսանողները սովորում են ձևակերպել մանկավարժական երևույթների ուսումնասիրման ընդհանուր սկզբունքները և մեթոդները, որոնք հետազոտվող ոլորտի գիտական կարևորագույն մասն են կազմում՝ մանկավարժական փորձաքննություն, վերլուծություն, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, մոդելավորում [2 , էջ 11], [1, էջ 139-142]:

5. Տեսական մեթոդները՝ վերացարկումը, իդեալականացումը, ֆորմալացումը, վերլուծությունը, ինդուկցիան, դեդուկցիան, օգնում են ձևակերպել մանկավարժական հիմնական, ընդհանուր օրինաչափությունները, որոնք հնարավորություն են տալիս բացատրելու փաստերը, կանխազգալու և կանխատեսելու սպասվող իրադարձություններն ու փաստերը [2, էջ 46]:

6. Բնօրինակների կոնտենտ վերլուծություն՝ դաստիարակության և նրա հետևանքի ըմբռնման տարբերությունը հասկանալու նպատակով:

Մանկավարժության տեսության հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը վկայում է, որ մանկավարժության տեսությունում և պրակտիկայում օգտագործվող գիտելիքները կրում են **ինտեգրատիվ բնույթ** (մանկավարժական, ընդհանրացված սոցիալական, մարդաբանական փիլիսոփայության, պատմության, սոցիոլոգիայի, հոգեբանության, անտրոպոլոգիայի, ֆիզիոլոգիայի, բժշկության, իրավագիտության և այլն), որտեղ օգտագործվում են այլ գիտությունների օրինաչափությունները, սկզբունքները, մեթոդները:

Հետազոտության նորույթը: Հիմնախնդիրը նորովի է հետազոտվել, և վերլուծության արդյունքում ստացվել է ինքնատիպ լուծում:

Եզրակացություն և հետագա հետազոտական հեռանկարներ: Հետազոտության արդյունքում հանգեցինք հետևյալին. նշված գիտությունների, նաև փիլիսոփայության, ընդհանուր, տարիքային և սոցիալական հոգեբանության, ընդհանուր մանկավարժության և մասնագիտական հատվածին վերաբերող մանկավարժական դասընթացներից ստացված գիտելիքները կօգնեն իրականացնել փորձարարական-որոնողական բազմատեսակ աշխատանքներ:

Որակյալ մասնագետ պատրաստելու համար անհրաժեշտ է ուսուցման գործընթացում արդյունավետ կազմակերպել հետազոտական-որոնողական գործունեությունը:

Օգտագործած գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Ա. Վ., Դժվար դաստիարակվող երեխաների ինքնահաստատման մանկավարժական ուղիները: Մենագրություն: Վանաձոր, «ՍԱՊԵՆՈ» տպագրատուն, 2013, 204 էջ:
2. Հովհաննիսյան Ա. Վ., Մանկատան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների առանձնահատկությունները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Ասողիկ», 2007, 60 էջ:
3. Бордовский В.А., Методы педагогических исследований инновационных процессов в школе и вузе: учебно-методическое пособие, СПб.: Изд-во РГПУ им. А.И. Герцена, 2001, 169 с.
4. Борытко Н.М., Методология и методы психолого-педагогических исследований: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Н.М. Борытко, А.В. Моложавенко, И.А. Соловцова; под ред. Н.М. Борытко, 2-е изд, стер., М.: Издательский центр «Академия», 2009, 320 с.
5. Загвязинский В.И., Методология и методы психолого-педагогического исследования: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / В.И. Загвязинский, Р. Атаханов, 6-е изд., стер., М.: Издательский центр «Академия», 2010, 208 с.

ПЕДАГОГИЧЕСКАЯ НАУЧНО-ПОИСКОВАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ В ВЫСШЕМ УЧЕБНОМ ЗАВЕДЕНИИ

Оганесян Анаит
Ванадзорский государственный университет им. О. Туманяна, Армения

Аннотация

Современная политика по всем направлениям образовательной деятельности предъявляет высокие требования к подготовке компетентных профессионалов. Подчеркивается необходимость активного использования инновационных разработок и исследовательских подходов. В последние годы стало ясно, что реформирование конкретных проектов в образовательных учреждениях – лучший способ выйти на лучшие практики – это работа каждого учебного заведения, а образование функционирует как социальная стабильность, преемственность культуры, моральное, физическое и психическое здоровье молодежи, активное и ответственное отношение творческого человека. Для достижения этой цели в высших учебных заведениях появилась новая поисково-исследовательская функция. Актуальность данной статьи обусловлена тем, что сегодня важно сформировать профессиональные компетенции, которые включают в себя знания системы социально-психолого-педагогических исследований по методологии и методам, умение организовывать, планировать и проводить исследования. Исследованием проблемы явилась педагогическая поисково-исследовательская деятельность в высшем учебном заведении, которая рассматривалась как важная функция в формировании профессионального потенциала и профессиональных компетенций. В основу исследования данной проблемы вошли научные труды Зазвягинского В.И., Атаханова Р., Бордовского В.А., Борытко Н.М., Моложавенко А.В., Соловцова И.А. Поисково-исследовательская функция имеет большое значение в подготовке педагогов-исследователей. Структура поисково-исследовательской функции включает исследование подходов философского, общенаучного, конкретно-научного уровня методологии. Ее освоение способствует формированию у студентов системы знаний о методологии и методах психолого-педагогических исследований, умении организовывать, планировать и проводить их. Усвоению теоретического материала способствуют принципы организации психолого-педагогических исследований, логика их проведений, теоретико-методологические подходы к исследованию, теоретические и эмпирические методы, способы апробации и интерпретации результатов исследования, а также комплекс предложенных заданий.

В статье предложены варианты заданий для студентов, обсуждающихся на семинарских и практических занятиях, что способствует формированию будущего педагога как в целом, так и формированию у него педагогического мировоззрения, обеспечивая уровень практической подготовки, необходимый для проведения педагогического исследования. Будущий специалист проведет исследования, проанализирует и обобщит полученные результаты, разработает и выполнит рекомендации.

Ключевые слова и выражения: *умение, методология, научное познание, педагогическое исследование, поисково-исследовательская функция.*

Список использованной литературы

1. Оганесян А.В., Педагогические пути самоутверждения трудновоспитуемых детей, Монография: Ванадзор, Издательство «САПЕНО», 2013, 204 с.

2. Оганесян А.В., Особенности учебно-воспитательной работы с детьми детского дома. Учебно-методическое пособие. Ереван, «Асогик», 2007, 60 с.

3. Бордовский В.А., Методы педагогических исследований инновационных процессов в школе и вузе: учебно-методическое пособие. – СПб.: Изд-во РГПУ им. А.И. Герцена, 2001, 169 с.

4. Борытко Н.М., Методология и методы психолого-педагогических исследований: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Н.М. Борытко, А.В. Моложавенко, И.А. Соловцова; под ред. Н.М. Борытко, 2-е изд, стер., М.: Издательский центр «Академия», 2009, 320 с.

5. Загвязинский В.И., Методология и методы психолого-педагогического исследования: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / В.И. Загвязинский, Р. Атаханов, 6-е изд., стер., М.: Издательский центр «Академия», 2010, 208 с.

PEDAGOGICAL SCIENTIFIC RESEARCH ACTIVITY IN THE HIGHER EDUCATIONAL INSTITUTION

Anahit Hovhanesyan

Vanadzor State University, after H. Tumanyan, Armenia

Summary

Contemporary politics when preparing professional capacity places high demands on all areas of educational activity. It emphasizes the need for active use of innovative developments and research approaches. In recent years, it has become clear that the reform of specific projects in educational institutions is the best way to look at the best practices - this is the work of each educational institution, and education functions as social stability, continuity of culture, moral, physical and mental health of young people, free, active and responsible education of a creative person. To achieve this goal, a new search and research function has appeared in educational institutions. The relevance of this article is due to the fact that today it is important to formulate professional competences, which include knowledge of the system of socio-psychological and pedagogical research on methodology and methods, the ability to organize, plan and conduct research: The discipline "Methodology and methods of pedagogical research" is of great importance in the preparation of teachers - researchers. The study of the problem was a pedagogical developments and research approaches in a higher educational institution, which was regarded as an important function in the formation of professional potential and professional competencies. The study of this problem was based on the scientific works of V. Zazvyaginsky, R. Atakhanov, V. Bordovsky,

N. Borytko, A. Molozhavenko, I. Solovtsov. The search and research function is of great importance in the training of teachers and researchers. The structure of the search and research function includes a study of the approaches of the philosophical, general scientific, scientific-specific level of methodology. This contributes to the formation of the future teacher as a whole, and in the formation of the pedagogical worldview, providing the level of practical training necessary to conduct pedagogical research. The course is focused on the development of students' methodological culture, the improvement of their scientific categorical apparatus. The training program assumes that the intern will conduct research, research, analyze and summarize the results, develop and implement recommendations. The article proposes options for assignments to students discussed in seminars and practical classes. The future specialist will conduct research, analyze and summarize the results obtained, develop and implement recommendations.

Keywords and expressions: *skill, methodology, scientific knowledge, pedagogical research, search and research function.*

References:

1. Oganesyan A. V., Pedagogical ways of self-affirmation of difficult children, Monograph: - Vanadzor, - «SAPENO» Publishing House, 2013, 204 pp.
2. Oganesyan A. V., Features of educational work with children of the orphanage. Teaching aid. «Asogik», Yerevan, 2007, 60 p.
3. Bordovsky V. A., Methods of pedagogical research of innovative processes at school and university: a teaching aid. - St. Petersburg: Publishing House of the Russian State Pedagogical University named after A.I. Herzen, 2001. - 169 p.
4. Borytko N. M., Methodology and methods of psycho-pedagogical research: textbook. allowance for students. higher textbook. institutions / N. M. Borytko, A. V. Molohavenko, I. A. Solovtsova; under the editorship of N. M. Borytko. - 2nd ed. - M.: Publishing Center «Academy», 2009. - 320 p.
5. Zagvyazinsky V. I., Methodology and methods of psychological and pedagogical research: textbook. allowance for students. higher textbook. institutions / V. I. Zagvyazinsky, R. Atakhanov. - 6th ed. - M.: Publishing Center, «Academy», 2010. - 208 p.

Материал был представлен и отправлен на рецензию: 20.04.2019
Принято к публикации: 03.09.2019
Рецензент: доктор пед. наук, проф. Камо Атаян

The material was submitted and sent to review: 20.04.2019
Was accepted for publication: 03.09.2019
Reviewer: Doctor of Sciences, Prof. Kamo Atayan